

# ՎԱՐԶԻՔ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՍՏՐԱԿՄԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԳՐԱՍ  
ФОНД ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

## ВАРДՅԿ



2 ՀԱՐԻԲՈՒ - ՆՈՎԵՄԲԵՐ 2010  
№ 2 ИЮЛЬ - НОЯБРЬ 2010



ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԻՃԱԿԸ  
ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

СОСТОЯНИЕ  
АРМЯНСКИХ ПАМЯТНИКОВ В  
ЗАПАДНОЙ АРМЕНИИ



ԽԱԳՔԱՐԵՐ «ԱՌԱՆՅ ԽԱԳԻ», Խաչի Հանրաճման տեսարանը Աղթամարի Ար. Խաչ եկեղեցու արևմտյան ճակատին:

Ա լուս.՝ Առնեն Հախնազարյանի, 1972 թ., Բ լուս.՝ Սրիվեն Սիմի, 1997 թ.

ՃԱԿԱՐՅ «ԵՅ ԿՐԵՏՈՎ». Սցենա «Վոզնեսենյա Կրեստ»-ի զաքադնոմ ֆաճադե շերքի Վերք Մաչի յա Օսթրո՛ւ Ախթաճար.

Փոտ. № 1 Արմենա Ախազարյան, 1972 թ., ֆոտ. № 2 Տիճենա Տիճա, 1997 թ.





Հրատարակվում է  
ՀՀ մշակույթի  
նախարարության  
հովանավորությամբ

Издается при поддержке  
Министерства культуры РА

## ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ 1915 Թ.-ԻՑ Ի ՎԵՐ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում կերտել է մշակույթի բազմաբնույթ և մեծաքանակ կոթողներ: Դրանց հիմնական մասը գտնվում է հայերի պատմական բնօրրանի՝ Հայաստանի տարածքում:

Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ 1915 թ., Երիտթուրքերի կառավարությունը նախ զավթած հայկական 6 նահանգները (Վան, Բաղեշ, Կարին, Խարբերդ, Սեբաստիա, Տիգրանակերտ) թուրքական պետության կազմում ամրագրելու նպատակով ողջ երկրամասում իսպառ բնաջնջում է բնիկներին, ապա 1920 թ. հոկտեմբերին հարձակվում 1918 թ.-ից անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության վրա և նվաճում նորանկախ երկրի արևմտյան շրջանները, մասնավորապես Կարսի մարզը և նույնիսկ օսմանյան պետության զավթումների բարձրակետում երբևէ թուրքերի ձեռքը չընկած Սուրմալուի գավառը:

Օգտվելով Հայաստանի համար ստեղծված քաղաքական ծանր կացությունից՝ հանրապետության հյուսիսային և արևելյան որոշ շրջաններ էլ զավթում են թուրքերին դաշնակցած Վրաստանն ու Ադրբեջանը:

Այսպիսով, 1920 թ. նոյեմբերից խորհրդայնացած Հայաստանը և 1991 թ. ծնունդ առած նրա իրավահաջորդ ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր սահմաններում ներառում է հայոց հայրենիքի շուրջ 1/10-րդ մասը միայն, իսկ մնացածը զավթված և բռնակցված է մնում հարևան պետություններին:

Ի հետևանք այս ամենի՝ հայկական պատմական հուշարձանների մեծագույն մասն էլ ինքնաբերաբար գտնվում է ներկայիս Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Անցած 8-9 տասնամյակների ընթացքում (1920 թ.-ից ի վեր) Հայաստանի հարևան պետությունները (Թուրքիա, Ադրբեջան,

## СОСТОЯНИЕ ИСТОРИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ ЗАПАДНОЙ АРМЕНИИ ПОСЛЕ 1915 ГОДА

За свою многовековую историю армянский народ создал разнообразные и многочисленные памятники культуры. Основная часть памятников находится на территории Армении—исторической родине армян.

В Первую мировую войну (1915 г.) правительство младотурков, с целью закрепления в составе турецкого государства 6 захваченных армянских провинций (Ван, Багеш, Карин, Харберд, Себастья, Тигранакерт), полностью истребило коренное население во всем крае, а затем в октябре 1920 г. напало на обретшую в 1918 г. независимость Республику Армения и завоевало западные районы страны, в частности, Карсскую область и гавар (округ) Сурмалу, который даже на пике завоеваний османского государства никогда не находился в руках турков.

Пользуясь тяжелой политической ситуацией, в которой оказалась Армения, заключившие союз с турками Грузия и Азербайджан захватили некоторые северные и восточные районы армянской республики.

Таким образом, ставшая советской с ноября 1920 г. Армения и являющаяся с 1991 г. ее преемницей нынешняя Республика Армения включает в свои границы только около 1/10-ой части родины армян, а остальная часть остается захваченной и аннексированной соседними государствами.

Вследствие всего этого, большая часть армянских памятников невольно оказалась за пределами нынешней Республики Армения.

За прошедшие 8-9 десятилетий (с 1920-ого года) соседние с Арменией страны (Турция, Азербайджан, Грузия,

Վրաստան, Իրան) հայկական պատմական հուշարձանների պահպանության հարցում դրսևորել են տարբեր մոտեցումներ: Բացառությամբ Իրանի՝ Հայաստանի Հանրապետության մյուս երեք հարևանների տարածքներում հայկական պատմական հուշարձանները ոչ միայն ենթակա չեն եղել պահպանության, այլև ծրագրված և միտումնավոր ոչնչացվել են:

Ուսումնասիրելով անցած մի քանի տասնամյակների ընթացքում Արևմտյան Հայաստանում գտնվող պատմական հուշարձաններին վերաբերող տվյալները՝ միանգամայն ակներև է, որ ցեղասպանության միջոցով Արևմտյան Հայաստանը բնիկներից պարպելուց հետո թուրքական իշխանությունները լծվել են բնիկներից ավանդված նյութական մշակույթի հուշարձաններն անհետացնելու գործին, քանի որ նրանց պարզունակ մտայնությամբ հայկական հուշարձանները դիտարկվում են որպես ուրացված և ժխտված պատմական իրականությունը մատնող անշունչ, սակայն չափազանց խոսուն վկաներ:

Այսպիսով, հազարամյակների ընթացքում ստեղծված և իրավամբ համամարդկային քաղաքակրթության անքակտելի արժեք համարվող հայկական պատմական բազմազար հուշարձաններ թուրքական իշխանությունների մոլագարությամբ ջնջվեցին հողի երեսից: Երևույթ, որի գործողությունների կանխամտածված կերպն ու ծավալները հաստատում են թուրքական կառավարության իրագործած եղեռնը նաև հայ մշակույթի հանդեպ:

Հատկանշական է, որ ջարդարարության առաջնային թիրախ էին ընտրվում հատկապես այն հուշարձանները, որոնք իրենց գոյությամբ առավել ցայտուն էին մատնանշում բնիկների ներկայությունը թեկուզ երբեմնի իրենց պատմական հայրենիքում: Այս պատճառով առաջնահերթորեն ոչնչացվում են հայ մշակույթի քրիստոնեական շերտի բաղկացուցիչ մաս կազմող վանքերն ու եկեղեցիները, բազմազար արձանագիր տապանաքարերով և խաչքարերով հարուստ հայկական գերեզմանոցները: Մինչդեռ հայկական կամուրջներից ու աղբյուր-

Иран) проявили разные подходы к вопросу о сохранении армянских исторических памятников. За исключением Ирана, на территориях остальных соседей Республики Армения армянские исторические памятники не только не охранялись, но и планомерно и преднамеренно уничтожались.

При изучении данных за несколько десятилетий, касающихся исторических памятников Западной Армении, становится очевидным, что опустошив Западную Армению путем геноцида коренного населения, турецкие власти задались целью уничтожить оставшиеся от них памятники материальной культуры, так как они рассматривались как неодоушевленные, но в тоже время чрезвычайно красноречивые свидетели исторической действительности, опровергаемой турками.

Таким образом, вследствие изуверства турецких властей, тысячи армянских исторических памятников, созданных за тысячелетия и считающихся поистине неотделимой частью человеческой цивилизации, были стерты с лица земли. Преднамеренность действий и их размеры подтверждают проводимый турецким правительством геноцид и по отношению к армянской культуре.

Характерно, что первоочередной мишенью для уничтожения были выбраны именно те памятники, которые своим существованием наиболее ярко указывали на присутствие коренного населения на бывшей когда-то исторической родине. По этой причине, в первую очередь, были уничтожены составляющие христианский пласт армянской культуры монастыри, церкви и армянские кладбища, богатые многотысячными надгробными плитами и хачкарами с надписями. Что касается других армянских памятников—мостов и родников, жилых и общественных построек, то с них исчезают преимущественно строительные

ներից, բնակելի կամ հասարակական կառույցներից անհետացվում են գլխավորապես հայերեն շինարարական արձանագրությունները, քանի որ այդ կերպ հնարավոր է թույլատրելի է նկատվում դրանց շահագործումն ու յուրացումը:

1928 թ.-ից Արևմտյան Հայաստանում զանգվածաբար անվանափոխության են ենթարկվում նաև բնակավայրերի և աշխարհագրական բնիկ հայկական տեղանունները:

1940-60-ական թվականներին հայկական հուշարձաններն Արևմտյան Հայաստանում ոչնչացվում են նաև երկրի զինուժի կողմից: Դրանցից շատերը, զինավարժությունների ժամանակ իբրև թիրախ, պայթեցվել են, իսկ սրբատաշ քարերն օգտագործվել որպես շինանյութ ավելի հաճախ գրանոցների կառուցման ժամանակ: Մինչդեռ կանգուն մնացածները ցայժմ ծառայում են որպես գոմ, պահեստ, նույնիսկ բանտ, որոշ դեպքերում էլ վերածվում են մզկիթի կամ էլ հայտարարվում «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:

Հայկական եկեղեցիների ավերումը թուրքական իշխանությունները հաճախ պատճառաբանում են այս գոտում տեղի ունեցող երկրաշարժերով: Սակայն ինչպե՞ս են այդ երկրաշարժերն ընտրություն կատարում միևնույն ժամանակ չավերելով սելջուկյան ոչ մի հուշարձան...

Տարիներ շարունակ թուրքական լրատվամիջոցները լուրեր են տարածում, թե իբր հարուստ հայերը նախքան երկրից «հեռանալը» իրենց ոսկիները թաքցրել են այն քարերի տակ, որոնց վրա առկա են «անհավատների» գրություններ, խաչի քանդակ և այլն: Ոսկի գտնելու մարմաջով տարված՝ Արևմտահայաստանի հայաթափ բնակավայրերը զբաղեցրած թուրք և քուրդ բնակչությունն անդադրում քանդել և տակավին քանդում է այն ամենը, ինչը հայկականություն է հուշում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն՝ 1915 թ.-ից հետո կանգուն մնացած 913 շինություններից 1974 թ. դրությամբ 464-ը իսպառ անհետացվել էր, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը վերականգնման լուրջ կարիք

надписи на армянском, что делает возможным и допустимым их присвоение.

С 1928 г. в Западной Армении в массовом порядке подвергаются переименованию, также, исконно армянские топонимы населенных пунктов и географических объектов.

В 1940-60 гг. в Западной Армении армянские памятники уничтожались и при участии армии страны. Многие из них во время военных учений послужили мишенью и были взорваны, а гладко тесаные камни часто использовались как строительный материал для постройки казарм. В то же время сохранившиеся памятники до сих пор служат хлевом, складом, даже тюрьмой, в некоторых случаях превращаются в мечети или объявляются образцами "архитектуры сельджуков".

Разрушение армянских церквей турецкие власти часто аргументируют происходящими в этом регионе землетрясениями. Но каким образом землетрясения делают выбор между армянскими и сельджукскими памятниками, не разрушая при этом ни один из сельджукских памятников?...

В течение многих лет турецкие средства массовой информации распространяют слухи о том, что якобы богатые армяне до того, как "покинуть" страну, спрятали свое золото под теми камнями, на которых есть надписи "неверных", рельефные изображения крестов и т.д. Охваченные жаждой наживы, турки и курды, занявшие некогда армянские территории Западной Армении, беспрестанно разрушали и все еще разрушают все то, что указывает на армянское происхождение.

Согласно данным ЮНЕСКО, по состоянию на 1974 г., из оставшихся в сохранности после 1915 г. 913 сооружений 464 были полностью уничтожены, 252 превращены в развалины, а 197 нуждались в серьезной реставрации. Вопреки принятому в Турции закону об охране и восстановлении исторических памятни-

ուներ: Հակառակ թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանության ու վերականգնման օրենքի գոյության՝ մինչև 1990-ական թվականների վերջերը ոչ մի հուշարձան չի վերականգնվել: Վերջին տարիներին ավելի նենգափոխման և յուրացման ծրագիր իրականացնելով՝ իշխանությունները սկսել են Անիում Տիգրան Հոնենց եկեղեցու, զինանշանի, պարիսպների, բնակելի թաղամասերի և առևտրական շարքերի, Կարսի Առաքելոց եկեղեցու, Աղթամարի Աբ. Խաչ վանքի վերականգնման աշխատանքները: Թվարկվածների շարքում վերջինս միակ դրական բացառությունն է՝ շնորհիվ մասնագիտական բարեխիղճ վերահսկողությունն իրականացրած ճարտարապետ Ջաքարիա Միլդանօղլու:

Այն բանաձևից, որ ցեղասպանությունն էթնիկական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական, այլև նրա մշակույթի ոչնչացումն է, հետևում է, որ հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը թուրքական իշխանությունները գործադրել են նաև 1915 թ.-ից հետո և, ըստ էության, շարունակում են գործադրել ցայժմ: Կեցվածք, որը միանգամայն անհարիր և դատապարտելի է միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՍՈՍ-ի անդամ և եվրոպական ընտանիքի մաս կազմելուն հավակնող պետության համար:

Ժամանակակից թուրքիայում ցեղասպանության ժխտումը դարձել է պետական քաղաքականություն: Այդ նպատակով ստեղծված և կառավարությունից հատուկ հովանավորվող կազմակերպությունները զբաղվում են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող բազմաթիվ գրքերի բազմալեզու հրատարակությամբ, տարածմամբ և քարոզչությամբ:

Այսպիսով, հայ մշակույթի նկատմամբ իրագործված և տակավին գործադրության մեջ գտնվող եղեռնը հետապնդում է երկու գլխավոր նպատակ՝ նախ ապացուցել, որ Արևմտյան Հայաստանը երբեք հայերի բնօրրանը չի եղել, և երկրորդ՝ թուրքիայում հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Կով, до конца 1990 г. ни один памятник не был восстановлен. В последние годы, осуществляя программу еще большей фальсификации и присвоения, власти начали восстановительные работы в Ани (герба, церкви Тиграна Оненца, крепостных стен, жилых кварталов и торговых рядов), церкви Сурб Аракеоц (Св. Апостолов) в Карсе, монастыря Сурб Хач (Св. Креста) на острове Ахтамар. В ряду перечисленных, последняя является единственным положительным исключением, благодаря сердобольному отношению архитектора Закарии Милданоглу, который осуществил добросовестный профессиональный контроль.

Из резолюции, согласно которой геноцид—это не только физическое уничтожение этнической или религиозной группы, но и уничтожение культуры, следует, что геноцид по отношению к армянам со стороны турецких властей осуществлялся и после 1915 г., и по сути продолжается до сих пор. Позиция, совершенно несообразная и порицаемая для государства, которое претендует стать членом таких международных организаций, как ЮНЕСКО и ИКОМОС, и частью европейской семьи.

В современной Турции отрицание геноцида стало государственной политикой. Созданные для этой цели и специально спонсируемые правительством организации занимаются публикацией, распространением, пропагандой многочисленных книг, изданных на разных языках и искажающих историю армянского народа.

Таким образом, осуществленный и все еще продолжающийся по отношению к армянской культуре геноцид преследует две главные цели: во-первых, доказать, что Западная Армения никогда не была исторической родиной армян, и, во-вторых, что в Турции не был осуществлен геноцид армян.



**ՏԵԿՈՐ.** Ար. Երրորդությունն եկեղեցու (Ե դար) տեսքը հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից և հատվածներ (լուս.՝ 1900-ական թթ.)





**ТЕКОР.** Вид церкви Сурб Ерродутюн (Св. Троицы) (V в.) с северо-запада, юго-запада, юго-востока и ее фрагменты (фот. 1900-ых гг.)





**ՏԵԿՈՐ.** Սրբ. Երրորդություն եկեղեցու մնացորդների ընդհանուր տեսքը 1976 թ. (լուս.՝ Զ. Բոլլի) և 2000 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

**ТЕКОР.** Общий вид остатков церкви Сурб Ерродутюн (Св. Троицы) в 1976 г. (фот. Дж. Болла) и в 2000 г. (фот. Самвела Карапетяна)



**ԲԱԳՐԱՎԱՆ.** Բագրևանդի Սր. Զովհաննու եկեղեցու (613-619 թթ.) ընդհանուր տեսքը հարավից և հատվածներ (լուս.՝ Զովսեփ Օրբելու, 1911-1912 թթ.)

**БАГАВАН.** Общий вид церкви Сурб Ованнес (Св. Иоанна Крестителя) (613-619) в Багреванде с юга и ее фрагменты (фот. Иосифа Орбели, 1911-1912 гг.)



**ԲԱԳՎԱՆ.** Բագրևանդի Ար. Հովհաննու եկեղեցու տեղը 1940-ական թթ. վերջերին հիմնահատակ քանդումից հետո: Քարերի մի մասն գործածվել է վանքի շուրջ գոյացած Տաշկեր գյուղում բնակարաններ կառուցելիս, իսկ մեծ մասը փոխադրվել է Աղրը քաղաք և օգտագործվել տեղի՝ 1950 թ. կառուցված գլխավոր մզկիթի ստորին շարվածքում (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2000, 2008 թթ.)

**БАГАВАН.** Место церкви Сурб Ованнес (Св. Иоанна Крестителя) в Багреванде после основательного разрушения в 1940-ых гг. Часть камней была использована во время строительства домов села Ташевлер, возникшего вокруг монастыря, а большая часть перевезена в город Агры и использована в нижней кладке стены главной мечети, построенной в 1950 г. (фот. Самвела Карапетяна, 2000, 2008 гг.)



**ԱՐԳԻՆԱ.** Կաթողիկէ եկեղեցու (ժ դար) տեսքը հարավից, հյուսիս-արևմուտքից, հարավ-արևմուտքից, արևմուտքից և հյուսիս-արևելյան որմնամուկի խոյակները (լուս.՝ 1900-ական թթ.)

**АРГИНА.** Вид церкви Катогики (X в.) с юга, северо-запада, юго-запада, запада и капители северо-восточного пристенного пилона (фот. 1900-ых гг.)



**ԱՐԳԻՆԱ.** Կաթողիկե եկեղեցու (ժ դար) մնացորդները 1940-1950-ական թթ. իրականացված պայթեցումից և սրբատաշ քարերի յուրացումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ԱՐԳԻՆԱ.** Остатки церкви Катогики (X в.) после того, как она была взорвана в 1940-1950-ых гг., а чисто тесаные камни—присвоены (фот. Самвела Карапetyяна, 2005 г.)




**ԵՐԱԶԳԱՎՈՐՍ (ՇԻՐԱԿԱՎԱՆ).** Սր. Փրկիչ եկեղեցու (Թ դար) տեսքը հարավից, հարավ-արևմուտքից, հարավ-արևելքից, հյուսիս-արևմուտքից, հատված եկեղեցու հյուսիսային պատի առջև, հարավային ճակատի արևելյան որմնախորշի պատկը, նույն ճակատի կենտրոնից բացված լուսամուտները և լուսամուտի պսակ հարավային մուտքի վերին ծախ անկյունում (լուս.՝ 1900-1910-ական թթ.)

**ЕРАЗГАВОРС (ШИРАКАВАН).** Вид церкви Сурб Пркич (Св. Спасителя) (IX в.) с юга, юго-запада, юго-востока, северо-запада; фрагмент северного фасада церкви; декоративное обрамление восточной ниши южного фасада; открытые с центра того же фасада окна; бровка окна в верхнем левом углу южного входа (фот. 1900-1910-ых годов)



**ԵՐԱԶԳԱՎՈՐՍ (ՇԻՐԱԿԱՎԱՆ).** Սր. Փրկիչ եկեղեցու (Թ դար) մնացորդները 1950-1960-ական թթ. կատարված պայթեցումներից և ավերումներից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 21.07.2006 թ.)

**ЕРАЗГАВОРС (ШИРАКАВАН).** Остатки церкви Сурб Пркич (Св. Спасителя) (IX в.) после осуществленных в 1950-1960-ых гг. взрывов и разрушений (фот. Самвела Карапетяна, 21.07.2006 г.)



**ՎԱՆԲԻԳԵՂ.** Սր. Բարդուղիմեոս առաքյալ վանքի (Թ-ժԵ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ 1917 թ.), հատվածներ արևմտյան ճակատից (լուս.՝ ճարտ. Բահմանի, 1913 թ.)


**ՎԱՆԿԻԳԵՒ.** Вид монастыря Сурб Бардугимеос Аракял (Св. Апостола Варфоломея) (IX-XVII вв.) с юго-запада (фот. 1917 г.); фрагменты западного фасада (фот. арх. В. Бахмана, 1913 г.)





**ՎԱՆՔԻԳԵՂ.** Սբ. Բարդուղիմեոս առաքյալ վանքի (Թ-ժԷ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից 1940-60-ական թթ. պայթեցումից և ավերումներից հետո, հատվածների արևմտյան ճակատի հարդարանքից (լուս.՝ ճարտ. Արմեն Յախնազարյանի, 1978 թ.), ռազմական հենակետի վերածված ընդհանուր տեսքը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

**ՎԱՆԿԻԳԵՒ.** Вид монастыря Сурб Бардугимеос Араякял (Св. Апостола Варфоломея) (IX-XVII вв.) с юго-запада после осуществленного в 1940-1960-ых гг. взрыва и разрушений; фрагменты убранства западного фасада (фот. арх. Армена Ахназаряна, 1978 г.); общий вид монастыря, превращенного в военную базу; фрагмент колючей проволоки вокруг базы (фот. Самвела Карапетыана, 2006 г.)



**ՆԱՐԵԿ.** Նարեկավանքի (Թ-ԺԹ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.), հարավ-արևելքից (2 նկար, առաջինը՝ գերմանական «Գլոբուս» հանդեսի 1870 թ. համարից) և կրկին հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.)

**ՆԱՐԵԿ.** Вид Нарекаванка (IX-XIX вв.) с юго-запада (фот. Ерванда Лалаяна, 1900-ые годы), с юго-востока (2 фот., первая взята из номера немецкого журнала “Глобус”, 1870 г.) и снова с юго-запада (автор фот. неизвестен, 1900-ые годы)



**ՆԱԲԵԿ.** վանքն իսպառ ոչնչացվել է 1940-1950-ական թթ.: Եկեղեցիների տեղում 1970-ական թթ. կառուցվել է մզկիթ, որի շուրջը կառուցապատվել է բնակելի շինություններով (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2004, 2007 թթ.)

**ՈՒՐԵԿ.** Монастырь был полностью разрушен в 1940-1950-ых гг.. На месте церкви в 1970-ых гг. была построена мечеть, позже застроенная жилыми постройками (фот. Самвела Карапетяна, 2004, 2007 гг.)



**ՏԻԳՆԻՍ ԳՅՈՒՂ.** Տիգնիսի բերդի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.) և բերդի մնացորդները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ՏԵՂՈ ԿԻՂՆԻՍ.** Общий вид крепости Тигнис с юго-востока (фот. арх. Тороса Тораманяна, 1900-ые годы) и ее остатки (фот. Самвела Карапетяна, 2005 г.)



**ՏԻԳՆԻՍ ԳՅՈՒՂ.** Տիգնիսի բերդի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.) և բերդի մնացորդները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)  
**СЕЛО ТИГНИС.** Общий вид крепости Тигнис с северо-востока (фот. арх. Тороса Тораманяна, 1900-ые годы) и ее остатки (фот. Самвела Карапетяна, 2005 г.)



**ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆԹ).** վանքի (Ե-ժԹ դդ.) տեսքը հարավ-արևմուտքից (Ա լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1900-ական թթ., Բ լուս.՝ Բողիլ Բյորնի, 1905 թ.), տեսարան հյուսիս-արևմուտքից, 2 նկար հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակներն անհայտ, 1910-ական թթ.)

**ԻՆՆԱԿՆԻԱՆ ՍՐԵԲ ԿԱՐԱՊԵՏ (ՍՎ. ԻՕԱՆՆԱ ՍՐԵԴԵՇԵՑԻ) ԿՐԻ ԳԼԱԿԱՎԱՆԿ.** Վիճ մոնասթերի (V-XIX ԿՎ.) Ս յո-ձաքաճ (ֆոտ. № 1 Վարճան Ամբիկյան, 1900-Կե ցոճ, ֆոտ. № 2 Բոճիլա Բյորն, 1905 ց.); Վիճ Ս յերո-ձաքաճ, 2 ֆոտոցրաֆիի մոնասթերի Ս յո-ձաքաճ (աճորի ֆոտ. յեիճճեճ, 1910-Կե ցոճ)



**ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐՊԵՏ (ՉԼԱԿԱՎԱՆՔ).** գլխավոր կառույցների տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Բորիլ Բյորնի, 1905 թ.), հյուսիս-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և արևմուտքից (լուս.՝ Վարդան Յամբիկյանի, 1910-ական թթ.) **ИННАКНЯН СУРЬ КАРАПЕТ (СВ. ИОАННА ПРЕДТЕЧИ) ИЛИ ГЛАКАВАНК.** Вид главных сооружений с юго-запада (фот. Бодила Бьорна, 1905 г.), северо-запада (автор фот. неизвестен, 1910-ые годы) и запада (фот. Вардана Амбикяна, 1910-ые годы)



**ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆՔ)**, վանքի մնացորդները 1972 թ. (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի)  
**ИННАКНЯН СУРЬ КАРАПЕТ (СВ. ИОАННА ПРЕДТЕЧИ) ИЛИ ГЛАКАВАНК.** Остатки монастыря в 1972 г. (фот. арх. Армена Ахназаряна)






**ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ (ՔԼԱՎԱԿԱՆՔ).** վանքի մնացորդները 1972 թ. (լուս.՝ Ճարտ. Արմեն Չախնազարյանի)  
**ИННАКНЯН СУРЬ КАРАПЕТ (СВ. ИОАННА ПРЕДТЕЧИ) ИЛИ ГЛАКАВАНК.** Остатки монастыря в 1972 г. (фот. арх. Армена Ахназаряна)



**ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿԱՐԱՊԵՏ (ԳԼԱԿԱՎԱՆԹ),** վանքի մնացորդները 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)  
**ИННАКНЯН СУРЬ КАРАПЕТ (СВ. ИОАННА ПРЕДТЕЧИ) ИЛИ ГЛАКАВАНК.** Остатки монастыря в 2006 г. (фот. Самвела Карапетяна)



**ԻՆՆԱԿՆՅԱՆ ՍՐ. ԿՐԱՂԵՏ (ՂԱԿԱԿԱՆԵ).** վանքի մնացորդները 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)  
**ИННАКНЯН СУРЬ КАРАПЕТ (СВ. ИОАННА ПРЕДТЕЧИ) ИЛИ ГЛАКАВАНК.** Обломки сооружений монастыря и надгробных памятников его кладбища, использованные при строительстве жилых домов села, возникшего на месте монастыря (фот. Самвела Карапетяна, 2006 г.)



**ՄՇՈ ԱՊԱՐԵԼՈՑ ՎԱՆՔ.** վանքի (Ե-ԺԹ դդ.) տեսքն արևմուտքից (լուս.՝ Վարդան Ջամբիրկյանի, 1910-ական թթ.) և արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.)

**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ) В МУШЕ.** Вид монастыря (V-XIX вв.) с запада (фот. Вардана Амбияна, 1910-ые годы) и востока (автор фот. неизвестен, 1900-ые годы)



**ՄՇԻ ԱՊԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ.** վանքի (Ե-ԺԹ դդ.) տեսքն արևմուտքից (լուս.՝ Ճարտ. Արմեն Հախնազարյանի, 1972 թ.) և արևելքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)  
**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВО) В МУШЕ.** Вид монастыря (V-XIX вв.) с запада (фот. арх. Армена Ахназаряна, 1972 г.) и востока (фот. Самвела Карапетяна, 2006 г.)




**ՄՇՈ ԱՊՈՍՏԵԼՈՅ ՎԱՆՔ.** վանքի (Ե-ԺԹ դդ.) տեսքն արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.)

**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ) В МУШЕ.** Вид монастыря (V-XIX вв.) с востока (автор фот. неизвестен, 1910-ые годы) и юго-запада (автор фот. неизвестен, 1900-ые годы)



**ՄՇԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ.** վանքի (Ե-ժԹ դդ.) տեսքն արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)  
**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ) В МУШЕ.** Вид монастыря (V-XIX вв.) с востока и юго-запада  
 (фот. Самвела Карапетяна, 2006 г.)



**ՄՇՈ ԱՊՈՍՏՆՈՑ ՎԱՆՔ.** գերեզմանոցի ընդհանուր (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և հատվածական (լուս.՝ Մ. Ցիցիկյանի, 1910-ական թթ.) տեսարաններ

**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ) В МУШЕ.** Общий вид монастырского кладбища (автор фот. неизвестен, 1910-ые годы) и отдельные фрагменты (фот. М. Цицикяна, 1910-ые годы)





**ՄՇԻ ԱՊՈՍՏՈՆՈՑ ՎԱՍԷ.** գերեզմանոցի ընդհանուր տեսքը 1910-ական թթ. (լուս.՝ Ս. Ցիցիկյանի) և արդեն հիմնահատակ ոչնչացումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ) В МУШЕ.** Общий вид монастырского кладбища в 1910-ых годах (фот. М. Цицикяна) и после основательного уничтожения (фот. Самвела Карапетяна, 2006 г.)



**ՄՇԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ.** վանքի գերեզմանոցում գտնվող խաչքար (1141 թ.)՝ կերտված Դավիթ Անհաղթ փիլիսոփայի հիշատակին (լուս.՝ Շավարշ Պալընյանի, 1960-ական թթ.)

**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВ) В МУШЕ.** Возведенный в память о философе Давиде Анахте (Непобедимом) хачкар (1141 г.) на кладбище монастыря (фот. Шаварша Палымяна, 1960-ые годы)



**ՄՇՈ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔ.** 1141 թ. Դավիթ Անհաղթ փիլիսոփայի հիշատակին կանգնեցված խաչքարի ջարդոտված մնացորդները տակնուվրա արված գերեզմանոցից հարավ՝ լեռնալանջին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2006 թ.)

**МОНАСТЫРЬ СУРЬ АРАКЕЛОЦ (СВ. АПОСТОЛОВА) В МУШЕ.** Разбитые фрагменты хачкара 1141 г., возведенного в память о философе Давиде Анахте (Непобедимом), находятся на склоне горы, к югу от разгромленного кладбища (фот. Самвела Карапетяна, 2006 г.)



**ԿՈՒՐՈՒՊԱՇ ԳՅՈՒՂ.** Սբ. Աստվածածնի վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.) և վանքատեղին 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

**ՏԵԼՈ ԿՐՐՍՊԱՏ.** Вид монастыря Сурб Аствацацин (Пресв. Богородицы) с юго-востока (фот. Ерванда Лалаяна, 1900-ые годы); место, где находился монастырь (фот. Самвела Карапетяна, 2006 г.)



**ՇՈՒՇԱՆՑ ԳՅՈՒՂ.** Կարմրվոր Սբ. Աստվածածնա վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.) և վանքատեղին 2006 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

**ՍԵՂՈ ՇՄՄԱՆՑ.** Վիճ մոնաստերյա Կարմրավոր Սուրբ Աստվածացի (Սրբ. Բոգորոճիցյ) ս յոգ-վոստոկա (ֆոտ. Երվանճ Լալայան, 1900-յե յոճ); մեոտ, ճե ուոճիճ մոնաստերյ (ֆոտ. Տամվել Կարապետյան, 2006 յ.)



**ԲԱԳՆԱՅՐ ԳՅՈՒՂ.** Բազմալորի վանքի տեսքը հյուսիս-արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և վանքի մնացորդները 2010 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)

**СЕЛО БАГНАЙР.** Вид монастыря Багнайра с северо-востока в 1900-ых годах (автор фот. неизвестен) и его остатки в 2010 г. (фот. Самвела Карапетяна)




**ԲԱԳՆԱՅՐ ԳՅՈՒՂ.** Բազմալորի վանքի տեսքն արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և մնացորդները 2010 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)  
**СЕЛО БАГНАЙР.** Вид монастыря Багнайра с востока в 1900-ых годах (автор фот. неизвестен) и его остатки в 2010 г. (фот. Самвела Карапетяна)



**ՏԵԿՈՐ ԳՅՈՒՂ.** Խճկոնքի վանքի տեսքը հյուսիս-արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և վանքի մնացորդները 2002 թ. (լուս.՝ Սթիվեն Սիմս)

**СЕЛО ТЕКОР.** Вид монастыря Хцконка с северо-востока в 1900-ых годах (автор фот. неизвестен) и его остатки в 2002 г. (фот. Стивена Сима)





**ՏԵԿՈՐ ԳՅՈՒՂ.** Խժկոնքի վանքի տեսքն արևելքից 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ) և վանքի մնացորդները 2000 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)  
**СЕЛО ТЕКОР.** Вид монастыря Хчконка с востока в 1900-ых годах (автор фот. неизвестен) и его остатки в 2000 г. (фот. Самвела Карапетяна)



**ՀՈՌՈՍՏՍ.** վանքին մերձակա հաղթակամարը 1900-ական թթ. (լուս.՝ հեղինակն անհայտ)

**ՕՐՈՄՈՏ.** Триумфальная арка рядом с монастырем в 1900-ых годах (автор фот. неизвестен)



**ՀՈՒՈՍՈՍ.** վանքին մերձակա հաղթական մնացորդները 2008 թ. (լուս.՝ Սամվել Կարապետյանի)  
**ՕՐՈՄՕՏ.** Остатки триумфальной арки рядом с монастырем в 2008 г. (фот. Самвела Карапetyана)



**ՀՈՒՈՍՈՍ.** վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (Ա լուս.՝ 1900-ական թթ., Բ լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)  
**ՕՐՈՄՈՍ.** Общий вид монастыря с юго-востока (фот. № 1 1900-ые годы, фот. № 2 2008 г., автор фот. Самвел Карапетян)



**ՀՈՒՈՍՏՍ.** վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (Ա լուս.՝ 1900-ական թթ., Բ լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)


**ՕՐՈՄՕՏ.** Общий вид монастыря с северо-востока (фот. № 1 1900-ые годы, фот. № 2 2008 г., автор фот. Самвел Карапетян)



**ԱՆԻ.** Հովվի եկեղեցու տեսքն արևելքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.)  
**АНИ.** Вид Пастушьей церкви с востока (фот. арх. Тороса Тораманяна, 1900-ые годы)



**ԱՆԻ.** Հովվի եկեղեցու տեսքը հարավից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)  
**АНИ.** Вид Пастушьей церкви с юга (фот. Самвела Карапетыана, 2007 г.)





**ԱՆԻ.** Միջնաբերդի գմբեթավոր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ ճարտ. Թորոս Թորամանյանի, 1900-ական թթ.)  
**АНИ.** Вид купольной церкви цитадели с юго-запада (фот. арх. Тороса Тораманяна, 1900-ые годы)





**ԱՆԻ.** Միջնաբերդի գմբեթավոր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2010 թ.)  
**АНИ.** Вид купольной церкви цитадели с юго-запада (фот. Самвела Карапетяна, 2010 г.)



**ՕՂՈՒՋԼԻ ԳՅՈՒՂ (ԿԱՐՍԻ ՄԱՐԶ).** Եկեղեցու (Թ դար) ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից, հյուսիս-արևմուտքից և հատված հարավային ճակատից (լուս.՝ 1910-ական թթ.)

**СЕЛО ОГУЗЛЫ (КАРССКАЯ ОБЛАСТЬ).** Общий вид церкви (IX в.) с юго-запада, северо-запада и фрагмент южного фасада (фот. 1910-ые годы)



**ՕԴՈՒԶԼԻ ԳՅՈՒՂ (ԿԱՐՍԻ ՍԱՐԶ).** Եկեղեցու (Թ դար) ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից, հյուսիս-արևելքից և հատվածներ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)  
**СЕЛО ОГУЗЛЫ (КАРССКАЯ ОБЛАСТЬ).** Общий вид церкви (IX в.) с юго-запада, северо-востока и ее фрагменты (фот. Самвела Карапетяна, 2008 г.)




**ԼԻՄ ԿՂՁԻ.** Սբ. Գևորգ վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.) և 1950-60-ական թթ. պայթեցումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2004 թ.)

**ОСТРОВ ЛИМ.** Вид монастыря Сурб Геворг (Св. Георгия) с северо-востока (фот. Ерванда Лалаяна, 1900-ые годы) и после осуществленного в 1950-1960-ых гг. взрыва (фот. Самвела Карапetyана, 2004 г.)




**ԼԻՍ ԿՂՋԻ.** Սր. Գևորգ վանքի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.) և 1950-60-ական թթ. պայթեցումից հետո (լուս.՝ ճարտ. Արմեն Զախնազարյանի, 1972 թ.)

**ОСТРОВ ЛИМ.** Вид монастыря Сурб Геворг (Св. Георгия) с юго-востока (автор фот. неизвестен, 1900-ые годы) и после осуществленного в 1950-1960-ых гг. взрыва (фот. арх. Армена Ахназаряна, 1972 г.)



**ԵՐԵՐԻՆ ԳՅՈՒՂ.** Սբ. Սահակ վանքի ընդհանուր տեսքը հարավից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ) և ավերումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ՏԵԼՈՒ ԷՐԵՐԻՆ.** Общий вид монастыря Сурб Саак с юга (фот. Ерванда Лалаяна, 1900-ые годы) и после его разрушения (фот. Самвела Карапетыана, 2005 г.)



**ԳԵՎԱՇ ԶԱՂԱՔ.** Սպիտակ վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ) և հիմնավեր վանքատեղին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ГОРОД ГЕВАШ.** Вид монастыря Спитак (Белого) с юго-востока (фот. Ерванда Лалаяна, 1900-ые годы); место монастыря, разрушенного до основания (фот. Самвела Карапетяна, 2005 г.)



**ԻԼԻ ԳՅՈՒՂ.** Քառասուն խորան Ար. Աստվածածին եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից (լուս.՝ Երվանդ Լալայանի, 1900-ական թթ.)  
և վանքի մնացորդները (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ՇԵԼՈ ՄԼԻ.** Вид церкви Карасун Хоран (“40 апсид”) Сурб Аствацацин (Пресв. Богородицы) с северо-востока (фот. Ерванда Лалаяна, 1900-ые годы) и ее остатки (фот. Самвела Карапетяна, 2005 г.)





**ԿՈՂՐԱՆՑ ԳՅՈՒՂ.** Սալնապատի վանքի տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ ճարտ. Բահմանի, 1913 թ.) և վանքի մնացորդները 1940-50-ական թթ. պայթեցումից հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2004 թ.)  
**СЕЛО КОХБАНЦ.** Вид монастыря Салнапата с юго-запада (фот. арх. В. Бахмана, 1913 г.) и его остатки после осуществленного в 1940-1950-ых гг. взрыва (фот. Самвела Карапетяна, 2004 г.)




**ԱՐԱՔԻՐԻ ՔՂՂԱՔ.** Ս. Աստվածածին մայր եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.) և քանդումից հետո եկեղեցատեղին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

**ГОРОД АРАБКИР.** Вид собора Сурб Аствацацин (Пресв. Богородицы) с юго-запада (автор фот. неизвестен, 1900-ые годы); место разрушенного собора (фот. Самвела Карапетяна, 2007 г.)



**ՆՈՐՈՎԱՆՑ ԳՅՈՒՂ (ՄՈՎՍ ԳՎՎԱՌ).** Կարմիր կամրջի ընդհանուր տեսքը (լուս.՝ ճարտ. Արմեն Հախնազարյանի, 1974 թ.) և 2005 թ. նորոգության ժամանակ ոչնչացված շինարարական արձանագրությունը (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2008 թ.)  
**СЕЛО НОРОВАНЦ (ГАВАР МОКС).** Общий вид моста Кармир (Красного) (фот. арх. Армена Ахназаряна, 1974 г.) и уничтоженная во время ремонта (2005 г.) строительная надпись (фот. Самвела Карапетяна, 2008 г.)



**ՎԱՐԱԳՎԱՆԶ.** վանքի տեսքը հյուսիս-արևմուտքից (լուս.՝ Վարդան Չամբիկյանի, 1910-ական թթ.) և վանքի մնացորդները տեղում գոյացած քրդաբնակ Բաքրաչլը գյուղով հանդերձ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ՎԱՐԱԳՎԱՆԿ.** Вид монастыря с северо-запада (фот. Вардана Амбикяна, 1910-ые годы), его остатки и возникшее на месте населенное курдами село Бакрачлы (фот. Самвела Карапетяна, 2005 г.)



**ՎԱՐԱԳԱՎԱՆԷ.** վանքի տեսքը հարավ-արևելքից (լուս.՝ հեղինակն անհայտ, 1910-ական թթ.) և վանքի մնացորդները տեղում գոյացած քրդաբնակ Բաքրաչլը գյուղով հանդերձ (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.)

**ՎԱՐԱԳԱՎԱՆԷ.** Вид монастыря с юго-востока (автор фот. неизвестен 1910-ые годы), его остатки и возникшее на месте населенное курдами село Бакрачлы (фот. Самвела Карапетяна, 2005 г.)




**ՎԱՐԱԳՎԱՆԷ.** վանքի տեսքն արևմուտքից (լուս.՝ Վարդան Համբիկյանի, 1910-ական թթ.) և վանքի մնացորդները հարավ-արևմուտքից (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

**ՎԱՐԱԳՎԱՆԿ.** Вид монастыря с запада (фот. Вардана Амбикяна, 1910-ые годы) и его остатки с юго-запада (фот. Самвела Карапетяна, 2007 г.)



**ԱՆԻ.** Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք (961-1045 թթ.) Անիի զինանշանը՝ խաչի հովանի ներքո, Սմբատյան պարիսպներից բացված ավագ մուտքի ճակատին (լուս.՝ հեղինակն անհայտ, 1900-ական թթ.) և «վերականգնումից» հետո (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2007 թ.)

**ԱՈՒ.** Герб Ани—столицы Багратидского царства (961-1045 гг.) под сенью креста, на фасаде главного входа Смба-  
товых стен (автор фот. неизвестен, 1900-ые годы) и после “восстановления” (фот. Самвела Карапетяна, 2007 г.)



**ՅԻՆԳԵԼ (ՈՇՏՈՒՆԻՔ ԳՎԱՍՈՒ), ԴԻՎԱԲՈՒՅՆԻ ՎԱՆՔ.** վանքի Սբ. Զարուբյուն գլխավոր եկեղեցու (1447 թ.) տեսքն արևելքից 2005 թ. և 2010 թ. հոկտեմբերի 26-ին գյավաշցի մի խումբ գանձախույզ սրիկաների ձեռքով քանդելու պահին (լուս.՝ Սամվել Կարապետյանի): Վանդալական գործողությունները տեղի էին ունենում Յինգել (այժմ՝ Ինքյո) գյուղի գյուղապետի, գյուղի միակ նավավարի համագործակցությամբ և տեղական իշխանությունների լուր հովանավորությամբ: Ի դեպ, նախկինում ևս վանքը բազմիցս ենթարկվել է ավերիչ ոտնձգությունների. մասնավորապես՝ վանքի գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատից բացված լուսամուտից վեր ազուցված սրբատաշ քարերը, որոնց վրա արձանագրված էր Աղթամարի Զաքարիա կաթողիկոսի ջանքերով վանքի՝ 1447 թ. վերաշինության պատմությունը, ոչնչացվել էին 1976-2005 թթ. միջակայքում: Տակնուկրա էր արված նաև վանքի գերեզմանոցը, որտեղ 2010 թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ խաչքարերը տապալված և կտորատված էին, գերեզմանները՝ փորված և պղծված:

**ՅԻՆԳԵՒ (ԳԱՎԱՐ ՐՄՏՈՒՆԻԿ), ՄՈՆԱՍՏԻՐԻ ԴԻՎԱԲՈՒՅՆԱ.** Главная церковь (1447 г.) монастыря—Сурб Арутюн (Св. Воскресения) с востока в 2005 г. и в момент разрушения группой мерзавцев—кладоискателей из села Геваш 26 октября 2010 г. (фот. Самвела Карапетяна). Действия вандалов осуществлялись при участии старосты села Хингех (ныне Инкёй) и единственного сельского капитана корабля, с молчаливого согласия местных властей. Кстати, в прошлом монастырь также подвергался разрушениям, в частности, между 1976-2005 гг. были уничтожены чисто тесаные камни, встроенные над окном, открытом с западного фасада главной церкви монастыря. На этих камнях была высечена история реставрации монастыря в 1447 г. усилиями Закарии—католика Ахтамара. Также было разгромлено монастырское кладбище, где по состоянию на 26 октября 2010 г. хачкары были повалены на землю и разрушены, а могилы—вырыты и осквернены.





**ԽԱՉՔԱՐԵՐ «ԱՈՒՆՑ ԽԱՉԻ».** Արևմտյան Հայաստանում այդպիսիք կարելի է հանդիպել ամենուրեք՝ Հռոմկլայում (լուս.՝ Հարթմուտ Յոֆրիխտերի, 1973 թ.), Կարսի շրջանի Կարմիրվանք գյուղի համանուն եկեղեցու արևմտյան ճակատին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2005 թ.), Արդվինի շրջանում գտնվող Խանձթալի վանքում (լուս.՝ Գունդոլֆ Բրուքհաուզի, 1976 թ.), Կարսի թանգարան փոխադրված մայր եկեղեցու դռներին (լուս.՝ Սամվել Կարապետյանի, 2000 թ.)

**ԽԱՉԿԱՐԿ «ԲԵՅ ԿՐԵՍՏՈՎ».** В Западной Армении такие хачкары можно встретить повсюду: в Ромкле (фот. Гартмута Гофрихтера, 1973 г.); на западном фасаде одноименной церкви села Кармирванк («Красный монастырь»), Карсский район (фот. Самвела Карапетяна, 2005 г.); в монастыре Хандзта, Ардвинский район (фот. Гундольфа Брукгауза, 1976 г.); на створках двери собора в Карсе, перевезенной в музей города (фот. Самвела Карапетяна, 2000 г.)



**ԽԱՉԲԱՐԵՐ «ԱՌԱՆՑ ԽԱՉԻ»**. Արևմտյան Հայաստանում այդպիսիք կարելի է հանդիպել ամենուրեք՝ Անիի Տիգրան Հոնենց եկեղեցուն, Ակն գավառի Շրգու գյուղի եկեղեցուն, Կաղզվան գավառի Ղարավանք (այժմ՝ Տաշքունուն) գյուղում գտնվող Խաչավանքում, Դերջան գավառի Ապրանք գյուղի եկեղեցուն (լուսանկարները՝ Սամվել Կարապետյանի, 2007-2008 թթ.) և այլուր: **ԽԱՉԿԱՐԻ «ԲԵՅ ԿՐԵՍՏՈՎ»**. В Западной Армении такие хачкары можно встретить повсюду: в церкви Тиграна Оненца в Ани; в церкви села Шрзу, гавар Акн; в монастыре Хачаванк села Караванк (ныне Ташбурун), гавар Кагызман; в церкви села Апанк, гавар Дерджан (фот. Самвела Карапетяна, 2007-2008 гг.) и в других местах.



1905 թ. Անիի Գագիաշեն եկեղեցու լայնամասերի ժամանակ հայտնաբերված Գագիկ Ա թագավորի (989 - 1020) արձանը, որի ճակատագիրը 1920 թ. Կարսի գրավումից հետո անհայտ էր: Ներկայումս արձանից մի բեկոր՝ ձախ թևը, ցուցադրված է Էրզրումի Պատմության բանգարանում առանց բացատրագրի:

The statue of King Gagik I (989 to 1020) unearthed during the excavations of Gagkashen Church of Ani in 1905. Its fate has remained obscure ever since the conquest of Kars in 1920. At present a fragment of the statue, its left arm, is exhibited in the history museum of Erzurum without any explaining note.



**2** ՀՈՒՆԻՍ - ՆՈՅԵՄԲԵՐ 2010  
N 2 JULY - NOVEMBER 2010

**ԳԼԽԱԿՈՐ ԽՄԲԱԳԻՐ  
ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Editor-in-chief  
**SAMVEL KARAPETIAN**

**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ  
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ԽՄԲԱԳԻՐ Editor  
**EMMA ABRAHAMIAN**

**ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԽՄԲԱԳԻՐ-ՄՐԱԳՐԻԾ  
Proof-reader (Armenian text)  
**HASMIK HOVHANNISSIAN**

**ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ԹԱՐԳՄԱՆԻԾ Translator  
**GAYANE MOVSISSIAN**

**ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՄԱԿԱՐԳԳՍՅԱՅԻՆ ՋԵԿԱԿՈՐՈՂ  
Designer  
**ARMEN GEVORGIAN**

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՍԱԳՆՈՂ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ  
RESEARCH ON ARMENIAN  
ARCHITECTURE FOUNDATION  
Engaged in informational Activity

ԿԿԱՅԱԿԱՆ N 03U089223

ՏՐԿԱԾ 13.10.2010

Certificate No. 03U089223  
Given 13.10.2010

**ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ**

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ**

**ՍԱՄԿԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Responsible for this issue  
**SAMVEL KARAPETIAN**

**ՏՊԱԳՐՎԵԼ Է**

**«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՀՐԱՏԱՐԱԿԶՍԱՆԸ**

Printed by  
**TIGRAN METZ Publishing House**

**ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ 1000**

Number of copies: **1000**

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ

Baghramian 24g, Yerevan, RA


<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ [raayer@sci.am](mailto:raayer@sci.am)

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ  
© Research on Armenian Architecture



ՀԱՅԿԱԿԱՆ  
ԵՐԱՏԱՐԱԾՆԵՑՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՍՈՒՆԱՍԻՄՈՂ  
ՉԿՆԱԴՐԱՄ  
ФОНД ПО ИЗУЧЕНИЮ  
АРМЯНСКОЙ  
АРХИТЕКТУРЫ

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН  
2010